ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » սեպտեմբերի 2015 թվական N: 198-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ, 1.23-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» կարգի 6-րդ կետի 5-րդ ենթակետի, 18-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015 թվականի հիմնական միջոցառումների պլանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2015 թվականի հոկտեմբերի 15-ին «Վահե Պետոյան» անհատ ձեռնարկատիրոջը պատկանող, Արթիկ քաղաքի Շահումյան 1 հասցեում գտնվող հրուշակեղենի արտադրամասի տարածքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը փլատակներում հրդեհի օջախի առկայությամբ» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ Կարեն Եղշատյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել.

1) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը և Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

5) Արթիկի «Ճանշին» փակ բաժնետիրական ընկերությունը.

6) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետարանի ղեկավար կազմը:

4. Հանձնարարել.

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

ա.մինչև 2015 թվականի հոկտեմբերի 5-ն ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

բ. կազմակերպել մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

գ. մինչև 2015 թվականի հոկտեմբերի 13-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումներն հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

ապահովել ուսումնավարժության լուսաբանումը,

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելության,

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ